ԹԵՄԱ 2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋ Է ԱՆՑՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑԱՎԱՁՔՈՒՄ

§ 13. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՁԵՎԱՓՈԽՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՐՀԸ: ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԳՆԱԺԱՄԸ

1 Պրոտեկցիոնիզմի քաղաքականության ցայտուն օրինակ էր Նապոլեոն Բոնապարտի «մայրցամաքային շրջափակման» քաղաքականությունը, որի նպատակը անգլիական ապրանքների բոյկոտն էր, որպեսզի առավելություն տա ֆրանսիական արդյունաբերական ապրանքների վաճառքին: Դրա համար Նապոլեոնը ռազմական հաղթանակների միջոցով Ֆրանսիայի ազդեցությունը տարածեց ողջ Եվրոպայի վրա՝ պարտադրելով գրեթե բոլոր երկրներին բոյկոտել անգլիական ապրանքները:

2

Բնակչության թվաքանակի աննախադեպ աճը XIX դ. պայմանավորված էր մի կողմից՝ ծնելիության պահպանվող բարձր մակարդակով, մյուս կողմից՝ բժշկության և առողջապահության համակարգի բարելավման շնորհիվ մանկական մահացածության կրճատմամբ:

Եթե XVIII դարում, հիմնականում Բրիտանական կղզիներից, Ամերիկայի անգլիական գաղութներ է արտագաղթել 5 միլիոն մարդ, ապա XIX դարում Եվրոպայից այլ երկրներ արտագաղթողների ընդհանուր թվաքանակը գերազանցեց 60 միլիոնը:



Արտագաղթի գլխավոր ուղիները

Գաղթականների թվաքանակը (մլն մարդ):
Բնակչության տեղաշարժը XIX դարում:

3

Եվրոպայի համար որոշ հետաքրքրություն էր ներկայացնում Եգիպտոսը, որը դեռ հնուց Արևելքի հետ առևտրի փոխաբեռնման կետ էր: Դա էր XVIII դարի վերջին դեպի Եգիպտոս Նապոլեոն Բոնապարտի ձեռնարկած արշավանքի նպատակը, ինչը նրա մտահղացմամբ Ֆրանսիային հնարավորություն կտար ուղիղ առևտրական կապ հաստատելու Հնդկաստանի հետ և այնտեղից դուրս մղելու անգլիացիներին: Ֆրանսիան հետագայում նույն նպատակով նախաձեռնեց Եգիպտոսում Սուեզի ջրանցքի կառուցումը: 1830 թվականից Ֆրանսիան սկսեց Ալժիրի, իսկ ավելի ուշ՝ նաև Թունիսի և Մարոկկոյի գաղութացումը:

4

XVIII դարում Մեծ Մողոլների կայսրությունն անկում էր ապրում, պետությունը տրոհվել էր ինքնավար իշխանությունների: Դրան նպաստում էին երկրում տիրող էթնիկական և սոցիալական խոր հակասությունները: Թեև Հնդկաստանի պաշտոնական կրոնը իսլամն էր, բնակչության մեծ մասը շարունակում էր դավանել հինդուիզմ, քիչ չէին նաև բուդդայականության հետևորդները, բնակչությունը բաժանված էր կաստաների: Այդ ամենը խանգարում էր հասարակության համախմբմանը արտաքին նվաճման վտանգին դիմակայելու համար: